ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ և ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՎԱՍԱՐ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ և ԽՈՋԸՆԴՈՏՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Տիգրան Օգանեզով

Երևան
2018թ. Հոկտեմբերի 19

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

«Ջուր և Առողջություն» արձանագրության ներքո 2015 - 2016թթ. մշակվեց Հայաստանում ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության (ՋՋՀՀ) ինքնագնահատման քարտը:

ՋՋՀՀ ինքնագնահատման քարտը մշակվել է ՄԱԿ-ի ԵՏՀ քարտուղարության և Ֆրանսիայի կառավարության աջակցությամբ՝ «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի իրականացմամբ և ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի համակարգմամբ:

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ և ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՎԱՍԱՐ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՐՏ

ՋՋՀՀ ինքնագնահատման քարտի նպատակն է օգնել կառավարությանը և շահագրգիռ կողմերին

- ✓սահմանել ջրի և ջրահեռացման հավասար, մատչելիության ելակետային չափանիշները,
- ✓քննարկել հետագա ձեռնարկվելիք գործողությունները,
- ✓ինքնագնահատման քարտի միջոցով գնահատել ՋՋՀՀ ապահովման գործում առաջխաղացումը:

Ինքնագնահատման քարտը գործիք է, որը կարող է օժանդակել ջրամատակարարման և ջրահեռացման նկատմամբ մարդու իրավունքների աստիճանաբար իրացմանը:

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ և ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՎԱՍԱՐ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՐՏ

Գնահատվել են

- ✓ Ղեկավար կառավարման շրջանակները անվտանգ խմելու ջրի և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման ոլորտում
- ✓ Աշխարհագրական դիրքով պայմանավորված անհավասարությունների կրճատումը
- ✓ Հասանելիության և մատչելիության ապահովումը խոցելի և մեկուսացված խմբերի համար

ՋՐԻ և ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՎԱՍԱՐԱՉԱՓ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ 2018-2020ԹԹ.

Նպատակը

- ✓ Սահմանել ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովմանն ուղղված միջոցառումների, դրանց գնահատման չափորոշիները, իրականացման պատասխանատուներին, համակատարողներին և ֆինանսավորման աղբյուրները:

Մշակման գործընթացը

- ✓ Իրականացվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից, ՀՀ ԷԵԲՊՆ Ջրային տնտեսության պետական կոմիտեի համակարգմամբ, ՄԱԿ-ի ԵՏՀ քարտուղարության աջակցությամբ:

Ժամանակահատվածը

- ✓ 01.12.2016- 01.05.2017

ՋՐԻ և ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՎԱՍԱՐ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ 2018-2020ԹԹ.

Բաժին 1.

Ջրի և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման արդյունավետ կառավարում

1.1 Ջրի և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման արդյունավետ կառավարման օրենսդրական և քաղաքական հիմքերը

1.2 Ջրի և ջրահեռացման հավասար հասանելիության ֆինանսավորում և նյութատեխնիկական բազայի ստեղծում

Բաժին 2

Ջրի և ջրահեռացման հավասար հասանելիության աշխարհագրական դիրքով պայմանավորված անհավասարությունների կրճատում

Բաժին 3

Ջրի և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովում խոցելի և մեկուսացված խմբերի համար

2017թ. դեկտեմբերի 5-ին կայացած հանդիպմանը *հավանության արժանացան* «Ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության (ՋՋՀՀ) ապահովման 2018-2020թթ. Գործողությունների պլանի իրականացման ուղիները և միջոցները»

Հաստատվեց ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ նախագահի 04 օգոստոսի 2017թ N130-Ա հրամանով:

Որոշվեց իրականացնել առաջին գործողությունը՝

«Ջրի մատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության (ՋՋՀՀ) ապահովելու նպատակով ջրային օրենսդրության վերլուծություն և խոչընդոտների վերհանում»

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նպատակը

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովումը՝ պատրաստելով համապարփակ իրավական վերլուծություն, որը հիմք կհանդիսանա լիազոր պետական մարմինների հետ երկխոսության և գործող օրենսդրության և պրակտիկայի բարելավման համար:

Խնդիրը

Ջրային ոլորտի օրենսդրության, մասնավորապես՝ ՀՀ Ջրային օրենսգրքի, ***խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման տեսանկյունից բացերի վերհանումը և բարեփոխումների առաջարկի ձևավորումը***:

Վերլուծությունը հիմնվում է տարբեր ազգային և միջազգային կազմակերպությունների կողմից կատարված հետազոտությունների արդյունքների, հաշվետվությունների և փորձագիտական գնահատականների վրա, ինչպես նաև ԵՄ ջրային օրենսդրության հիմքում դրված հիմնական աղբյուրների վրա:

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ և ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ՀՀ ջրային օրենսգրքում բացակայում են մի շարք եզրույթների սահմանումները:

ՀՀ ջրային օրենսգրքի հիմնական հասկացություններում սահմանել հետևյալ եզրույթները.

- *«ջրահեռացում»,*
- *«ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիություն»,*
- *«ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովում մեկուսացված և խոցելի խմբերի համար»:*

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ և ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Ազգային օրենսդրությունը, մասնավորապես՝ ՀՀ ջրային օրենսգիրքը, չի ներառում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության մոտեցումները և չափորոշիչները:

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության մոտեցումները կարող են ամրագրվել ՀՀ ջրային օրենսգրքի ընդհանուր դրույթները, նպատակները, ջրի ազգային ծրագիրը, ինչպես նաև անցումային դրույթները նկարագրող հոդվածներում:

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ և ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Ազգային օրենսդրությունը, մասնավորապես՝ ջրային օրենսգիրքը, չի սահմանում խոցելի ու մեկուսացված խմբերի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության իրավունքները:

Խոցելի ու մեկուսացված խմբերի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության իրավունքները կարող են ամրագրվել ջրային հարաբերություններում տնտեսական խթանների և վճարումների համակարգը նկարագրող գլխում, ինչպես նաև ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարումը, օգտագործումը և պահպանությունը նկարագրող հոդվածում:

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ և ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Ազգային ջրային օրենսդրությունում բացակայում են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացմանը ներկայացվող չափորոշիչները:

ՀՀ ջրային օրենսգրքի անցումային դրույթներում ավելացնել խմելու ջրի մատակարարմանը և ջրահեռացմանը ներկայացվող չափորոշիչների՝ այդ թվում՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովումը:

ՀՀ ԶՐԱՑԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ:

- ***Հոդված 1. Օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները***

«Հասարակայնության ծանուցում» հասկացությունը շարադրել հետևյալ կերպ՝

հասարակայնության ծանուցում՝ առաջարկվող գործունեության ազդեցության վերաբերյալ շահագրգիռ կողմերի տեղեկացում, որը կտպագրվի առնվազն 4000 տպաքանակ ունեցող ՀՀ պաշտոնական տպագիր միջոցներում և էլեկտրոնային տարբերակը կտեղադրվի համապատասխան պատասխանատու կազմակերպությունների վեբ կայքերում՝ հատուկ առանձնացված բաժնում:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ:

Հոդված 1. Օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Հոդվածը համալրել հետևյալ հասկացություններով

<u>Ջրամատակարարում՝</u> մակերևութային և/կամ ստորերկրյա ջրային ռեսուրսներից սպառողներին մատակարարվող անհրաժեշտ քանակի և համապատասխան որակի ջուր:

<u>Ջրահեռացում՝</u> սպառողներից հոսքային ջրերի ընդունման և մաքրման կայաններ տեղափոխելու տեխնոլոգիական գործընթաց:

<u>Ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիություն՝</u> ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների այնպիսի կազմակերպում, որը կապահովի հավասար հասանելիություն սպառողների, այդ թվում խոցելի և մեկուսացված խմբերի համար:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ:

Հոդված 1. Օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները

<u>Ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման տեսանկյունից մեկուսացված և խոցելի խմբեր.</u> սույն օրենսգրքի շրջանակներում նշված խոցելի և մեկուսացված խմբերն են այն խմբերը, որոնք բաղկացած են անհատներից, ովքեր դժվարություններ են կրում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման իրենց իրավունքներն իրականացնելիս:

*(Այդ խմբերը կարող են ներառել ջրամատակարարումից և ջրահեռացումից զուրկ բնակարանային պայմաններում, ծերանոցներում, մանկատներում ապրող, առողջապահական և կրթական հաստատություններից օգտվող, անազատության մեջ գտնվող, հատուկ ֆիզիկական կարիքներով և անօթևան մարդկանց, փախստականներին, ինչպես նաև մարդկանց, ովքեր իրենց աշխատավայրերում ապահովված չեն խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման հասանելիությամբ):

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ:

Հոդված 5. Ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման, օգտագործման և պահպանության հիմնական սկզբունքները

14-րդ կետը շարադրել հետևյալ կերպ՝

պետական բյուջեում սուբսիդիաների կամ օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնությունների նախատեսում՝ *այդ թվում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման ընթացքում հավասար հասանելիության ապահովման ժամանակ առաջացած* ֆինանսական ճեղքվածքի մարման համար:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ:

Հոդված 6. Սույն օրենսգրքի նպատակը

Շարադրել հետևյալ կերպ՝

Սույն օրենսգրքի նպատակն ազգային ջրային պաշարի պահպանությունն է, օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսությունների պահանջների բավարարման, ***<u>քաղաքացիների/բնակիչների/սպառողների ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման,</u>*** շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովման, ինչպես նաև սույն օրենսգրքի խնդիրների լուծման համար իրավական հիմքերի ապահովումը:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 3. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՌԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ, ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Հոդված 16. Ջրի ազգային ծրագիրը

Ջրի ազգային ծրագիրը նկարագրում է կառավարության հաստատած ջրավազանային կառավարման փարածքների՝ **բառերից հետո 15-րդ կետից հետո ավելացնել նոր 16-րդ կետ՝**

<u>ջրամատակարարմանը և ջրահեռացմանը ներկայացվող ներկա և հետագա պահանջարկը, հավասար հասանելիության ապահովմանն, աշխարհագրական դիրքով պայմանավորված անհավասարության կրճատմանն ուղղված միջոցառումները և մեթոդները:</u>

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գ Լ Ո Ւ Խ 11. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽԹԱՆՆԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՋՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հոդված 77. Ջրօգտագործման թույլտվության համար վճարները

Հոդվածի 3-րդ պարբերությունը շարադրել հետևյալ կերպ՝

Եթե ջրօգտագործումը համապատասխանում է հասարակական շահերին և սույն օրենսգրքի պահանջներին, ապա Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինն անհրաժեշտության դեպքում կարող է առաջարկել նվազեցնել ջրօգտագործման թույլտվությունների վճարները կամ տրամադրել ֆինանսական օժանդակություն՝ տնտեսական զարգացումն ու ներդրումները խթանելու, *մեկուսացված և խոցելի խմբերին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիությունը և մատչելիությունն ապահովելու* համար:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գ Լ Ո Ւ Խ 11. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽԹԱՆՆԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՋՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հոդված 81. Ֆինանսական օգնությունը ջրային հարաբերություններում

Հոդվածի 5-րդ պարբերության 1-ին կետ. (Ֆինանսական օգնության տրամադրման ժամանակ հաշվի են առնվում)

«Ֆինանսական օգնության տրամադրման նպատակը» բառերից հետո ավելացնել *<u>այդ թվում՝ աշխարհագրական դիրքով պայմանավորված, մեկուսացված ու խոցելի խմբերի համար խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության և մատչելիության ապահովումը</u>*»

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 17. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 121. Անցումային դրույթներ

Հոդվածի 5-րդ կետը (Կառավարությունը սույն օրենսգրքի պաշտոնական հրապարակումից հետո՝**) համալրել նոր 55-րդ ենթակետով՝** *սահմանում է ջրամատակարարման և ջրահեռացմանը ներկայացվող չափորոշիչները՝ այդ թվում՝ ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության:*

Հոդվածի 5-րդ կետը համալրել նոր 56-րդ ենթակետով՝ *սահմանում է ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման տեսանկյունից մեկուսացված և խոցելի խմբերը:*

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ